

տանի, գնում է աղջկայ տունը: Փոքր ինչ խօսակցութիւնից յետոյ աղջիկը, իւր երեսը քողով ծածկած, թէյ է մատուցանում: Երիտասարդի հետ եկած կինը աշխատում է բանալ աղջկայ երեսը ու տեսնել նրա գեղեցկութիւնը: Ապա համբուրում է ճակատից և բերած մատանին դնում մատը: Այս ծէսը տեղական բարբառով ընչ տանիլ է կոչւում¹⁾:

Չանգեզուրում այն գումարը, որ վճարում են տղայի ծնողներն աղջկայ ծնողներին հարսնացուի համար կոչւում է *ճընապան*, այսինքն ճանապարհի գինը, և կամ կոչւում է այլ անունով ծծագին. ժողովրդի կարծիքով այստեղ վճարւում է մօրից ծծած կաթի գինը: Բացի ծծագնից տղայի հայրը պարտաւորւում է հարսնացուի ծնողներին ուղարկելու մի եզ կամ երկու ոչխար, 5—6 կուժ գինի, կէս կուժ օղի, թօփ ու կէս դարայի կտոր²⁾:

Շատ բնորոշ է այն խորհուրդը, որ տեղի է ունենում *Տաթևում-Սիսիանում* աղջկայ ու փեսայի ծնողների միջև, երբ որոշում են հարսանիքի օրը և թէ որքան փող ու ընծայ պէտք է տայ փեսայի կողմը աղջկայ տիրոջը: Այդ խորհուրդը տեղական բարբառով կոչւում է *տուր* և *տո*, կամ *ըաշըլ կտրել*, որպիսի սակարկութեանը մասնակցում են նաև երկու կողմի ազգականներից ընտրուած մի մի հաւատարմատարներ՝ *վաքիլներ*³⁾:

Չաւախքում, երբ վերջապէս աղջկայ հայրն յայտնում է աղի կողմից եկած պատգամներին իւր աղջիկը տալու համաձայնութեան մասին, վերջինները գալիս են աղի հօր մօտ և խորհրդակցում, թէ որքան գումար պէտք է տալ աղջկայ տէրերին և առնելով այդ գումարը գնում են աղջ-

1) Անգ. եր. 120.

2) Եր. Լալայեան՝ Չանգեզուրի գաւառ Բ. հատ. եր. 72.

3) Сборникъ матеріаловъ по описанію мѣстн. и народо-
въ Кавказа, Выпускъ II, 1832 г. և Выпускъ XIII 1892 г.
„Татевъ“. նաև Ե. Լալայեան—Չանգեզուրի գաւառը՝ Սիսիան
հատ. Ա. եր. 114.